

ԺՆՏՈՂԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐԲԻԱՆ ՄԻԼԻՈՆՆԵՐ Է ԾԱԽՍՈՒՄ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՈԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԽԱՂԸ ԿԵՐԱԿՍԻԼ ԴԱՇՏԻ ԿԵԴՐՈՆԵՆ, ԲԱՅՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ...

«Գնդակը այժմ երեսնցիներուն բերդին մէջ է: Արարատ դարձեալ պիտի սկսի դաշտի կերտնէն...»: Ֆուլթայլային բառարանին ծանօթ արտայայտութիւններ, մանաւանդ Հայաստանի մէջ բարձրագոյն կրթութիւն ստացած ուսանողներուն համար:

Անհատապաշտութեամբ եւ անպատասխանատուութեամբ, Հայաստանի գործող իշխանութիւնները կատարեցին յետ անկախութեան ժամանակաշրջանի ռազմավարական, պետականութեան արժանապատուութիւնը ոտնակոխող ամենալուրջ ու ամենածանր սխալը:

Հայ-թրքական «ճանապարհային քարտէս»-ի մը գոյութեան կամ նախապատրաստութեան մասին լուրը այնքան ալ մեծ անակնկալ մը չէր: Արդարեւ, կ'ուզէք յիշեցնել մեր ընթերցողներուն, թէ Սերժ Սարգսեանի նախագահի պաշտօնին ընտրութիւնը շնորհաւորող առաջին պետութիւններէն մէկը Թուրքիան էր: Իսկ նորանշնանակ արտարարելու, որ Հայաստան պատրաստ էր երկխօսութեան ձեռք երկարելու Անգարայի իշխանութիւններուն:

Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններ հնարաւոր է հաստատել Թուրքիոյ կողմէ Հայկական Տեղասպանութեան ճանաչմամբ եւ հայ ժողովուրդի իրաւունքներուն վերականգնմամբ:

Հայկական Տեղասպանութեան ճանաչման հարցը նախ եւ առաջ բարոյական հարց է: Տեղասպանութեան ճանաչումը այլ տարբերակով ընկալելը ազգային բարոյագրութեան չափանիշ է պարզապէս: Ինչպէ՞ս համաձայնութիւն կնքել իր յանցագործութիւնը մերժող պետութեան մը հետ: Չենք ուզեր զգացմունքներով առաջնորդուիլ, սակայն ոճի գործած պետութիւն մը ի վերջոյ պիտի ընդունի՞ իր յանցագործութիւնը թե՛ ոչ: Բայց ցաւալի է տեսնել, որ Հայաստանի իշխանութիւնները ան այսօր, ամենամիամիտ այս հարցումին իսկ պատասխան տալու հնարաւորութիւն չունին. ինչո՞ւ այս «համաձայնութիւնը» կը բռնաբար Հայկական Տեղասպանութեան նահատակներու յիշատակի օրան նախասեմին: Ունի՞ն արդեօք պատասխան Հայաստանի իշխանութիւնները:

Երբ Թուրքիա չի զղջար, հետեւաբար չի հրաժարիր ցեղասպանութիւնը կրկնելու գաղափարէն: Վարչապետ Էրտողլանի վերջին յայտարարութիւնները ապացոյց են, թէ հակառակակալութիւնը կը մնայ Թուրքիոյ պետական գաղափարախօսութիւնը: Երբ Էրտողլան օրեր առաջ, յաջողաբար ջորորդով անգամ ըլլալով կը յայտարարեր, թէ հայ-թրքական սահմանի տարածքային վերանայելի միայն դարաբաղեան հակամարտութեան լուծումէն ետք, այս կեցուածքը ինքնին ապացոյց է, որ Թուրքիա չէր հրաժարած իր ցեղասպան քաղաքականութենէն: Ուստի ցեղասպանի կողմէ գործած յանցանքին ճանաչումը միաժամանակ երաշխիք պիտի հանդիսանայ կանխելու անոր կրկնութիւնը:

Հայկական Տեղասպանութիւնը ճանչնալու երեւոյթը պէտք է հետեւաբար դիտարկել Հայաստանի Հանրապետութեան ազգային անվտանգութեան կարեւորագոյն հիմքերէն մէկը, որուն ինքնաբերաբար պիտի յաջորդէ անոր իրաւական գնահատականը:

Այս իմաստով, հայ-թրքական ճանապարհային քարտէսին յայտնութիւնը Հայաստանի գործող իշխանութիւններուն, ոչ՝ հայկական դիւանագիտութեան մեծագոյն պարտութիւնն էր:

Տակաւին գոյութիւն ունի աւելի խորհրդաւոր իրողութիւն մը: Մինչեւ այս պահը Հայաստանի եւ արտասահմանի մէջ գործող քաղաքական հոսանքներէն ոչ ոք իրազեկ պահուած է այսօր յորջորջուած ճանապարհի քարտէսին կետերուն: Օրինակի համար ի՞նչ կը նշանակեն յայտարարութեան մէջ յիշատակուած «2020-ական յառաջընթաց» եւ «փոխադարձ ըմբռնում» արտայայտութիւնները: Որո՞ւնք միջեւ արձանագրուած են այդ խորհրդաւոր «յառաջընթաց»-ները եւ «ըմբռնում»-ները: Հայաստանի իշխանութիւնները արդեօք ունին պատասխանատու, համազգային արժանապատուութեան կշռոյթով այդօրինակ համաձայնութիւն մը կնքելու իրաւաստութիւն: Մէկ բան յստակ է, որ հայ հասարակական-քաղաքական միտքին բաւական խորք կը թուին այդ խորհրդաւոր ու մութ «ըմբռնումները» եւ «յառաջընթացները»: Սփիւռքը արդեօք ներառնուած էր այդ գաղտնի բանակցութիւններուն մէջ:

Այսօր անորոշութիւն կը տիրէ ամենուրեք: Հայաստանի իշխանութիւնները նախ ամէն բանէ առաջ պարտաւոր են բացայայտել, ժողովուրդին սեփականութիւնը դարձնել ճանապարհային քարտէսին փաստաթուղթը: Որքան շուտ այնքան լաւ: Թրքական կողմը սկսած է ապատեղեկատուութեան մէջ խեղդամահ դարձնել հայ-թրքական համաձայնութեան կետերը, իսկ Հայաստան լուրջութեամբ կը նախընտրէ պահել: Ինչի՞ վերագրել այս: Բայց հետաքրքրական է, որ Ազգային Անվտանգութեան խորհուրդի 25 Ապրիլի նիստին ընթացքին, նախագահ Սերժ Սարգսեան կը յայտարարէ, թէ հայ-թրքական համաձայնագիրը «ինչ որ պահի» ընթացքին պիտի դառնայ ժողովուրդին սեփականութիւնը: Ինչ որ պահի...: Այսինքն ո՞րն է այդ պահը...: Մենք պիտի չմիտքով թրքական մամուլի ապաքարոզչական մեկնաբանութիւններուն մէջ, սակայն պիտի փափաքէինք ընդունիլ մեր սխալը, թէ երբեք իսկապէս Հայաստան խախտած չըլլար անկախութենէն ի վեր յայտարարած՝ Թուրքիոյ հետ առանց նախապայմաններու յարաբերութիւններ վարելու մասին իր սկզբունքային կեցուածքը: Եթէ ճիշդ են թրքական մամուլի մէջ տեղ գտած մեկնաբանութիւններն ու համաձայնութեան կետերը, այս իրողութիւնը ինքնին մեծ հարցական մը պիտի ստեղծէ Հայաստանի այսօրուան ղեկավարութեան ցուցաբերած լրջութեան ու անկեղծութեան: Իսկ թէ քարոզչական հերթական խաղ մըն է թրքական մամուլին կատարածը կամ դիտարկուող կերպով, փորձաքարի ենթարկելու միտում մը իմանալու՝ հայկական կողմին ձգտումները, ինչո՞ւ լուր է պաշտօնական երեսնալը ու չի պատասխաներ...: Լռութիւն կը պահէ ու չի հակազդեր:

Հայ ժողովուրդին համար ներքին պիտի չըլլայ իր պետականութեան արժանապատուութիւնը ոտնակոխող, ազգային պատասխանատուութենէն խուսափելու Հայաստանի իշխանութիւններուն դատապարտելի քայլերը: Պահանջատիրական երթը չի ճանչնար սակարկութեան քարտէսներ: Գնդակը իսկապէս Հայաստանի այսօրուան իշխանութիւններուն բերդին մէջ է, ոչ՝ ժողովուրդին, եւ պէտք է կտրուկ ելքեր փնտռել: Մրցումը դաշտի կերտնէն վերակսիլի համազգային կանոններով է ոչ՝ սեփական, այլապէս...:

ԱՐԱՐԱՏ ԾԻՆՏԸՍԵԱՆ

Թուրքագիտութեան ինստիտուտն այդ ժամանակից ի վեր խոշոր նուիրատուութիւններ է ստացել Թուրքիայի գէնը վաճառող ամերիկեան ռազմական կապալառուներից, ներառեալ՝ «Ճեներալ Տայնամիքս»-ը (General Dynamics) եւ «Ուեսթինգհաուս»-ը (Westinghouse): Թուրքիան շարունակում է ամենամեայ տուբսիդիաներ տրամադրել ինստիտուտին: 2006թ. (սա ամենավերջին տարին է, որի վերաբերելու հարկային տուեսներ կան), ինստիտուտը 85,000 տոլարի դրամաշնորհներ է տրամադրել գիտնականներին: Հաստատութեան նախագահը ԱՄՆ-ում Թուրքիայի գործող դեսպան Նաթի Սեւոյնի է: Գիտնական շրջանակներում Հայոց Տեղասպանութիւնը մերժող այս «ինտուստիտայի» ազդեցութեան ծաւալման առաջին անհերքելի ապացոյցը «ժամանեց» 1990թ., Նիւ Եորքի Սիթի համալսարանի շրջանաւարտների կետորոնի եւ ճոն Լէյ Գոլդէի փորձերը, հոգեբան եւ հոգեբույժ Ռոպերթ Ճէյ Լիֆթօնի հասցեագրուած ծրարում: Ծրարում կար նաեւ՝ ստորագրուած այն ժամանակ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Նուսթէ Զանտեմիրի կողմից: Դեսպանը բողոքում էր գիտնականի՝ «Նացիստական բժիշկները բժշկական սպանութիւններ եւ ցեղասպանութեան հոգեբանութիւնը» վերաբերող մրցանակակիր գրքում տեղ գտած՝ Հայոց Տեղասպանութեան մի քանի թուղթի վկայակոչումների դէմ:

«Յատկապէս մտահոգիչ է, որ Ողջակիզման (ողբերգութիւն, որի հրեշայնութիւնն ու բարբարոսութիւնը երբեք չպետք է մոռացուի) գծով խոշոր գիտնականը կարող է այդքան անզգոյշ լինել իր մասնագիտական դաշտից դուրս գտնուող հարցի վերաբերելու յղումներում,- գրել է Զանտեմիրը: - Մոլորեալ հայ ազգայնականների հրահրած ողբերգական քաղաքացիական պատերազմի եւ դրա պատճառով մահացողների, եւ քրիստոնեաների կրած մարդկային տառապանքների համեմատութիւնը մի ժողովրդի սիստեմատիկ բնաջնջման ծրագրուած փորձի հետ, պարզապէս անհեթեթութիւն է բոլոր նրանց համար, ովքեր ծանօթ են պատմութեանը»:

Արտասովոր ոչ մի բան չկար Զանտեմիրի նամակում: Թուրքական իշխանութիւններն այն ժամանակ եւ հիմա էլ պարբերաբար դատաւիտում են այն գիտնականների, որոնք գրում են Հայոց Տեղասպանութեան մասին: Լիֆթօնի հետաքրքրութիւնը, սակայն, շարժեց երկրորդ նամակը, որը թուրք դիւանագետը պատահաբար էր դրել ծրարում: Դա Մերձաւոր Արեւելքի գծով պատմաբան Հիլը Լոուրիի՝ Զանտեմիրին ուղղուած գեկուցագիրն էր՝ կետ-առ-կետ շարադրուած հաշուեթերթիկ, թէ ինչպէս պէտք է «գրողել» Լիֆթօնի գիրքը, որը Լոուրիին անուանում էր «Մեր խնդիրը»:

Այդ ժամանակ Լոուրիին Թուրքագիտութեան ինստիտուտի հիմնադիր տնօրէնն էր: Նա այդ պաշտօնից հրաժարւեց 1996թ., երբ 20 թեկնածուների միջից ընտրուեց Փրինսթոնի համալսարանի Աթաթուրքի անուան թուրքագիտութեան ամբիոնի վարիչ՝ Նոր պաշտօն, որը Թուրքիայի կառավարութեան տրամադրած \$750,000 գրանտով ստեղծուել էր Մերձաւորարեւելեան ուսումնասիրութիւնների (Near Eastern Studies) ֆակուլտետում: Փրինսթոնի դասախոսական կազմին միանալուց առաջ, Լոուրիին երբեք դասախօսի մշտական աշխատանք չէր ունեցել եւ որեւէ խոշոր հրատարակչատան միջոցով ոչ մի գիտական աշխատութիւն չէր հրատարակել: Դրա եւ, ինչպէս 1995թ. «Պոսթոն Գլապ»-ն է բնութագրել՝ «թուրքական կառավարութեան երկարամեայ լուպիտոն»-ի նրա աշխատանքի պատճառով, նրա նշանակումը փոքրակից վիճաբանութեան պատճառ դարձաւ: «Փրինսթոնի շրջանաւարտներն՝ յանուն վստահութեան» կոչուող բողոքի խումբը Լոուրիի նշանակումը դատապարտող յայտարարութիւն հրատարակեց, որը ստորագրել էին աւելի քան 80 առաջատար գիտնականներ ու գրողներ, այդ թւում՝ Զիրտ Վոնտգուրթ, Արթուր Միլլերը, Զոննէյ Վեսթը, Ճոն Զառլ Օուլսթը, եւ բազմաթիւ ալ պատմաբաններ ու ցեղասպանագետներ:

Զուլեյթի համալսարանի բարոյագիտութեան եւ աշխարհի հասարակութիւնների ուսումնասիրութեան կետորոնի տնօրէն, «Այրուող Տիգրիսը, Հայոց Տեղասպանութիւնը եւ Ամերիկայի Արձագանգը» գրքի հեղինակ Փիթըր Բալաբեանը Լոուրիին անուանել է «ստար կառավարութեան քարոզիչ»:

2005թ. ելոյթ ունենալով Հայոց Տեղասպանութեան 90-ամեակին նուիրուած Փրինսթոնի գիտաժողովում՝ Բալաբեանը

հետտրական հարց հնչեցրեց. «Կը ցանկանա՞ր արդեօք համալսարանը, որ նեո-նացիստական խմբի հետ աշխատող մէկն իր ֆակուլտետում զբաղուէր Ողջակիզումը կոծկելով»:

Թուրքիայի փոխարարութիւնները Հայոց Տեղասպանութեան մերժումն առաջ մղող ամերիկացի գիտնականների հետ նման են նաֆթարդիւնաբերութեան եւ կոպալ տաքացման իսկութիւնը հերքող մարդկանց կլիմայագետների միջեւ յարաբերութիւններին: Պատճառահետեւանքային կապը յստակ չէ: Անհար է վստահաբար ասել՝ նրանք այդպիսի յայտարարութիւններ են անում, որպէսզի վճարուէ՞ն, թե՛ վճարում են, քանի որ նման յայտարարութիւններ են անում: Հաստերն էլ, ովքեր Թուրքագիտութեան ինստիտուտից գումարներ են ստանում, ոչինչ կամ գրեթէ ոչինչ չեն անում՝ պաշտպանելու կառավարութեան վարկածը, թէ ինչ է տեղի ունեցել իրենց հայ փոքրամասնութեան հետ:

Անշուշտ նրանց մի մասն, այդ թւում՝ Լուիսիվիլի համալսարանում պատմութեան փորձեցող Ճասթին Սքալարթին, աշխատում է այդ ուղղութեամբ: Սքալարթին պնդում է, թէ «այս մտացածին թուրքական ծրագրին» (ինչպէս ինքն է որակում) վերագրուող զոհերի թիւը կոպտօրէն չափազանցուած է, եւ այդ զոհերը հետեւանք են արդարացուած ինքնապաշտպանական գործողութիւնների, որ հրահրել են դաւաճան հայերը՝ պատերազմի ընթացքում Թուրքիայի դէմ վերջինիս թշնամիների հետ դաւադրութիւն ծրագրելով:

Սքալարթի նաեւ ընդգծում է, որ «այսպէս կոչուած Հայոց Տեղասպանութիւնից» առաջ առնուազն մէկ դեպքում հայերն են կոտորել թուրքերին: Այլ խօսքով՝ նրանք են եղել դրողները: «Ն՛ւ պատմական, եւ բարոյական տեսանկիւնից շատ կարեւոր է, թէ ով է սկսել բախումները», - յայտարարել է Սքալարթին 2005թ. ելոյթ ունենալով Թուրքիայի մեծ ազգային ժողովում: «Աւելի քան 100 տարի տեւած պատերազմական գործողութիւններում հայերը եւ թուրքերը կոտորել են իրար: Պէտք է հասկանալ, թէ ով է սկսել սպանութիւնները, որովհետեւ ազդեցողը հաւատարէպ է արդարացուած, մինչդեռ ինքնապաշտպանութիւնը միշտ է արդարացուած»:

(Շար. 2)

ՅՕԴՈՒԱՇՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐԱՒ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԸ. «ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ» (*) ՀԵՂԻՆԱԿ ԱՐԱ ՊԱՊԵԱՆ

Կայսերապաշտական տերութիւնները իրենց ծաւալապաշտական ռազմաքաղաքականութեան ընթացքին կը խաղան կայացած համեմատաբար աւելի փոքր պետութիւններու կամ ենթակայ ժողովուրդներու ճակատագրին հետ: Անոնք իրենց կամքն



նու պայմանները կը թելադրեն, կ'որոշեն «փորձերուն» կացութեանն ու յարաբերութիւնները շրջանի ժողովուրդներուն ու համաշխարհային մակարդակներու վրայ: Կը կնքեն դաշնագրեր ու պայմանագրեր, այնպէս ինչպէս իրենց կայսերապաշտական հաշիւներուն կը յարմարին: 1878-էն մինչեւ օրս (20 Մարտ 2009) հայ ժողովուրդին պարտադրուած են այնպիսի դաշնագրեր, որոնց պատճառով հայոց ճակատագիրը հիմնովին այլ ուղղութիւն ստացած է (ընդհանրապէս կ'վճառ հայութեան): Նոր սերունդի արհեստավարձ պատմաբաններն ու դիւանագիտական պատրաստութիւն ունեցողներն ոմանք, հայրենիքի

մէջ թէ արտերկրի, սկսած են այս ուղղութեամբ կատարել լուրջ պրպտումներ: Այդ սերունդին մաս կը կազմէ պատմաբան ու դիւանագետ Արա Պապեան, որ 2000-2006 Հայաստանի Հանրապետութեան արտակարգ ու լիազօր դեսպանն էր Գանատայի մէջ: Ան հմտացած է թէ՛ հայրենիքի եւ թէ՛ այլ երկիրներու դիւանագիտական դպրոցներէ ներս եւ կը տիրապետէ ռուսերէն, անգլերէն, պարսկերէն եւ յունարէն լեզուներու, 1988-1989 ղեկավարած է Աֆղանիստանի Պատերազմի Հայ Մասնակիցներու Միութիւնը եւ այլն:

Փոքրածաւալ այս ժողովածուն խտացած հանրագիտարան մըն է վերջին հարիւրամեակին հայութեան համար բախտորոշ դաշնագրերու ու պայմանագրերու, որոնց Արա Պապեան կը մօտենայ իրաւական տեսանկիւնէն ու ուղի կը նշէ ներկայի ու ապագայի դիւանագետներու եւ քաղաքագետներու համար, որոնք հայկական պահանջատիրութիւնը դարձուցած են իրենց մտանքներու: Ժողովածուի 14 յօդուածներու մէջ կը քննարկուին Ռիլսքեան Հայաստանի հետ կապուած հարցերը, Մուսկոյի Ռուս-Թրքական Պայմանագիրը (16 Մարտ 1921), Կարսի Պայմանագիրը, Սեւրի եւ Լոզանի պայմանագրերու իրաւական փոխարարութիւնները, հայ ժողովուրդի նիւթական աստղաբաշխական կորուստները, հայկական յուշարձաններու կարգալիճակը Թուրքիոյ մէջ, Լեռնային Դարաբաղի հիմնահարցը, Հայաստանի շրջափակումը որպէս միջազգային պարտաւորութիւններու կոպիտ խախտում եւ այլ յարակից էական հարցեր: Դիւանագետ-պատմաբանը մէկ առ մէկ, յստակ ու միջազգային ակնբերեւ համաձայնագրերու (որոնց տակ ստորագրած են Թուրքիան, Ռուսաստանի Սոցիալիստա-

կան Ֆետերաթի Սովետական Հանրապետութիւն, ԱՄՆ եւ ուրիշներ) լոյսին տակ ցոյց կու տայ հայկական պահանջատիրութեան օրինակամոտիւնն ու հետեւաբար ճշմարտացիութիւնը:

Այսպէս օրինակ, կը գրէ ան. «Հայաստանը, որպէս ՄԱԿ-ի անդամ երկիր, կրնայ ՄԱԿ-ի միջազգային դատարանի միջոցով (Միջազգային դատարանի կանոնագրութեան 36-րդ յօդուածի 2 կետի վրայ ա) եւ բ) ենթակէտերու հիման վրայ) հաւաստել Ռիլսքեանի իրաւարար վճռի (arbitral award) վաւերականութիւնը եւ ատով իսկ վերահաստատել իր տիրուոր իրաւարար վճռով Հայաստանին յատկացուած տարածքի վրայ» (էջ 7):

Գիրքը ոչ միայն լայն հասարակութեան դաստիարակութեան ու լուսարմոյթեան համար անհրաժեշտ հրատարակութիւն մըն է, այլեւ յատկապէս կարեւոր է Հայաստանի այսօրուան պետական այրերուն ու կարգ մը գործօն դիւանագետներուն, որոնք չես գիտեր ինչո՞ւ զիջումէ զիջում կ'երթան՝ ծունկի գալով հայ ժողովուրդի դիւերմը թշնամի Թուրքիոյ ու անոր դաշնակից պետութիւններու առջեւ:

ԳՌԿՏ. ՄԻՆԱՍ ԳՈՐԾԱՅԵԱՆ Լուս Անճելոյ

Ծանօթութիւն. Հեղինակը վերջերս այս թեմայով ելոյթ ունեցաւ նաեւ Լուս Անճելոյի մէջ՝ Հայկական Տեղասպանութեան Ոգեկոչման Միացեալ Յանձնախումբի կազմակերպած գիտաժողովին՝ արժանանալով մասնագետներու եւ հետաքրքրուողներու լուրջ ուշադրութեան:

(*) Թողնալով 2008, յօդուածները գրուած են Դեկտեմբեր 2006-Յուլիս 2007 ժամանակահատուածի մէջ: